BURBANK UNIFIED SCHOOL DISTRICT

Տեղեկատվական ծառայություններ

12-րդ դասարանցիներ – ՊԱՀՊԱՆԵՔ ՁԵՐ ՏՎՅԱԼՆԵՐԸ

~ Էլեկտրոնային փոստի հասցեները և Գուգլ փաստաթղթերը ~

Այն աշակերտներն, ովքեր ավարտում են միջնակարգ դպրոցը կամ տեղափոխվում դպրոցական շրջանից դուրս, ամեն տարի խնդրում են մեզ պահել էլեկտրոնային փոստի հասցեները կամ այն փաստաթղթերը (files), որոնցից օգտվել են մեր շրջանում սովորելու ընթացքում:

Դպրոցական շրջանից դուրս գալուց հետո, դուք այլևս չեք կարող օգտվել էլեկտրոնային փոստի հասցեից կամ փաստաթղթերից:

- Եթե ցանկանում եք պահել ձեր փաստաթղթերը կամ էլեկտրոնային փոստի հասցեն, <u>խնդրում ենք ժամանակ հատկացնել</u> և փոխանցել դրանք էլեկտրոնային փոստի ձեր հասցեին, տպել դրանք, պահել PDF ֆորմատով կամ ներբեռնել մեր համակարգից դուրս գտնվող USB կրիչում (drive):
  - Ինքներդ ձեզ հղում կամ փաստաթղթի դյուրանցումի (shortcut to the file) ուղարկելը չի պահպանի իրական փաստաթուղթը:
  - Սա շատ կարևոր է երաշխավորող նամակների, քննությունների արդյունքների, նախագծերի և այլնի համար:

Եթե դուք օգտագործում են դպրոցական էլեկտրոնային փոստի հասցեն անձնական բաժանորդագրությունների համար, խնդրում ենք փոխարինել այն մեկ էլեկտրոնային փոստի մեկ այլ հասցեով մինչև դպրոցական շրջանից դուրս գալը (կամ տեղափոխվելը):

- **ԵՐԲԵՔ** մի օգտագործեք ձեր անձնական հաշիվները շրջանային բաժանորդագրությունների համար:

<u>Ներբեռնեք ձեր Գուգլ կրիչի (Google Drive) տվյալներն արտաքին (մեր համակարգից դուրս) USB կրիչում (Drive)</u>

- Արտաքին USB կրիչի օգտագործումն ամենահեշտ մեթոդն է ձեր տվյալները պահեստավորելու համար:

Հետևեք այս քայլերին օգտագործելով կայքի կիրառական հավելվածի միջերեսի (web app interface).

1. Նախքան Գուգլ կրիչից (Google Drive) ձեր փաստաթղթերը կամ թղթապանակները (folders) պահեստավորելը, համոզվեք, որ ձեր նոր պահեստավորման վայրը արտաքին USB կրիչն է: Հակառակ դեպքում, դուք պետք է արտագրեք ձեր տվյալները (copy the data) ներբեռնված վայրից և տեղադրել արտաքին սկավառակի վրա (external hard drive):
   ա. Որոնել հետևյալը, պարզելու համար ինչպես դա անել.
      i. **Փոփոխել ներբեռնման վայրը՝** սա փոխելու ձեր համակարգչի, գործող համակարգի կամ որոնման համակարգի համար:
2. Հյուրընկալել Google Drive website և մուտքագրվել շրջանի կողմից տրված էլ. փոստի հասցեով:
   ա. https://www.google.com/drive/
3. Ընտրել փաստաթղթերը կամ թղթապանակները, որոնք ցանկանում եք տեղափոխել արտաքին USB կրիչ:
   ա. Միաժամանակ ներբերոնել մի քանի փաստաթուղթ և թղթապանակ սեղմելով CTRL և սեղմելով/ընտրելով այդ փաստաթուղթը:
4. Աջ սեղմել փաստաթղթի կամ թղթապանակի վրա և սեղմել ներբերոնել (Download):
5. Հետևեք հրահանգներին և պահպանեք դրանք նոր վայրում:



- **ՓՈՐՁԱՐԿՈՒՄ**
  - Շրջանից մեկնելուց առաջ, խնդրում ենք փորձել, թե արդյո՞ք էլեկտրոնային փոստի ձեր հասցեն և փաստաթղթերը պահպանված են, որոնք դուք տեղափոխել եք (արտաքին USB կրիչ, մեկ այլ Գուգլ կրիչ, էլեկտրոնային փոստի հասցե և այլն):

Շնորհակալություն, մինչև ձեր մեկնումն, այն կատարելու համար և ցանկանում ենք ամենայն բարիք:
Տեխնոլոգիական ծառայություններ: